

յշապում մըն է զոր միւսիւլմանները չեն ճանչնար :

Այս պատրիարքներէն մէկը Խուպեարի շէյխն է: Նա կապրի Սվազի հիւսիս-արեւելեան կողմը, 55 քիլոմէթրի մը չափ հեռու, Թոքաթի գետակին մէջ թափող հեղեղի մը վերը, վայրի դիրքի մը վրայ հաստատուած խելճուկ թիֆեի մը մէջ: Կը պատմուի որ Ալի մանուկ եղած ատեն Խուպեար եկած, կրօնի թշնամիներուն ձեռքը իյնալով՝ փակուած է հընոցի մը մէջ: Եօթն տարեկան կրակ վառուած է: Երբ յետոյ քացած են հնոցը, տեսած են թէ զոլ էր, եւ թէ Ալի կապրէր ու մանուկը ժրպտուն՝ ձեռքը բռնած էր ծաղիկ մը: Խուպեարի շէյխը օսմանեան կառավարութենէն միւսիւլման շէյխ ճանչցուած է եւ ունի կայսերական հըրովարտակ մը: Բայց գաղբեցուցած են տարեկան այն նպաստը զոր ժամանակաւ կատանար պետութենէն:

Կըզըլ-պաշները շատ անգամներ ուխտի կերթան Խուպեարի սըր-լավայրը: Ասկէ վերջ ամենէն յարգելի թէքքէներն են՝ Սէվիհի, Փիր Սուլթանը, Էսլընճաք եւ Հաճի Պէքթաշ: Այս վերջինը աղանդին տեսակ մը միւսիւլման կնքահայրն է:

(Շարուհախի)

Ֆ. ԿՐԸՆԱՐ
Թարգմ. Մ. Յ. ՊԷՐՊԷՐԵԱՆ



Յ Ի Ծ Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ն ՊԱՍՍԱՃԵԱՆ ԳՐԻԳՈՐ ՊԱՏՐԻԱՐԷԻ

Հակառակորդք ջանային ըստ ամենայնի եւ բռնանային ի վերայ ուղղափառաց, զայրալնէին եւ կրճտէին զատամուռս, բրածեծս տունէին խոտասրտիւն իւրեանց առանց խնայելոյ, եւ հարկադիրս լինէին ի վերայ նոցա, զի անարգեացեն եւ նզովս կարգացեն վասն Սրբոյ Եկեղեցւոյն, եւ վասն հայրապետացն եւ պահակալացն նոցին: Սակայն ուղղոմելիքն, որ աստանօր կարեմք ասել կենդանի նահատա՛յք Քրիստոսի եւ հարազատ զաւակունք եւ որդիք եկեղեցւոյն սրբոյ, որք տանէին համբերութեամբ եւ մեծաւ սիրով, կամաւ եւ ամենայն յօժարութեամբ այնքաս նեղութիւնս եւ պատանելի շարչարանս ի փառս Յիսուսի եւ ի պատիւ Եկեղեցւոյն իւրոյ, խնդրելով միասիրտ եւ միաբերան զօգնութիւնս ի Տիտանէ եւ ի յա՛մենայն ժամու զայն հայցէին զի

կարողք լինիցին չիջուցանել զամենայն հրեղէն նետս մուխս չարին ։
Ու առի աշաքան տառապակրութիւնս, ղոր կրեցին եւ տանողք եղեն եւ
կրեն միւտ ոչ թէ ի յայլոց ազգաց եւ կամ ի օտարաց, այլ ի ընտ-
նեաց եւ ի յազգակցացն իւրեանց, ղոր կրեցին եւ ընկաւ ան եւ արբին
զբաժակ չարչարանաց վասն սիրոյ սրբոյ հաւատոյն եւ սրբոյ եկեղեց-
ոյ նորին ։

Ուրեմն ո՛վ դու անձդ վտտաբախտ եւ տառապեալդ եւ ըստ ամե-
նայնի վշտակիրդ, մի՛ աշղշափ վշտանար եւ մի՛ առաւել ցաւիր ի վե-
րայ քոյին զմթախտութեանդ ։ այլ ցաւեալիր ի վերայ անց, զի քստ
որում միշտ ունեցար զթերութիւնս եւ զպակասութիւնս ի կացու-
թեան քում յամենայն կողմանց ամենայն պարագայիւք, որպէս յայտն
երեւէր ի քեզ, որպէս անաւասացից. վասն զի եթէ ի կողմանէ խրա-
ւացդ եւ քարոզութեանդ ոչ էր այնքան ախորժելի եւ ազդու, որ-
պէս վաւազակն կոչեցեալ զիտին Պոնտոսի, Ուլանէս եպիսկոպոսին, որ ի
քարոզելոյն ի մէջ ատենի եւ յունկս հասարակաց, ոչ ի վերայ այլոց
նիւթոց, եթէ ոչ զկերպ եւ զեղանակ մերձաւորութեան եւ զուղաւա-
րութեան ուսուցանէր, որ լսողք զմայլելին եւ բերանարացս միային
պշուշեալս ընդ յերեսս եւ զնորին մեղրածորան վարդապետութիւնս ։

Եթէ ի կողմանէ ջերմեռանդութեանդ առեմ ո՛չ եւ ո՛չ որպէս գի-
տին կեսարիոյ քաղաքին, այսինքն՝ Դաւիթ եպիսկոպոսին, որ մեծաւ
հաւատով եւ ջերմեռանդն օրտիւ ուսէր զմիտ մատաղին եւ զկնի ու-
սելոյն ի վերայ միացեալ ոսկերաց նորին զկարգ թաղման մեռելոց
կատարեալ եւ յետոյ ամբողջէր ի մէջ եւ ի ներքոյ հողոյ ։

Եթէ ի կողմանէ քաղաքավարութեանդ ամենեւին էր ամարդօրէն
ընդ ամենեւսինս. քանզի երբեք զուրկ եւ ոչ թէ գիտէին ի գործ անել
որպէս զԴէորդայ պատրիարքին Ղափանեցւոյն, որ յաղթեցեալ ի խո-
նարհութենէ եւ ի քաղաքավարութենէն իւրոյ, ինքն կայծս դնէր ի
վերայ միափայտից իւրով ձեռամբն եւ ի վերայ հոտաքոյր փայտս ի
շիւր ժամանակի յառաջագլէմ իշխանաց, որպէս թէ խունկս մատու-
ցանէր պարսեղով վնասս ։

Եթէ ի կողմանէ խոնարհութեանդ եւ խոհմութեանդ, ամենայնի
հետի էին ի քէն, եւ ոչ ունէիր որպէս պատրիարքին Ջաքարիային, որ
իւրոյ պատրիարքութեն եւ եպիսկոպոսական կարգովն, յառնէր ի վե-
րայ ոտից եւ առնէր սպասարկութիւնս եւ զմատուակութիւնս. ինքն
ըմպէր լիալիր անցուցանելով իւր զմատանի ոսկեղէնս լեզուի իւրում
եւ ապա մեծաւ աղաղակաւ եւ զոչելովն տայր եւ արքուցանէր բազմե-
լոցն ամենեցունց գտանեցելոցն, եւ իբր երկնային եւ ամային օրհնու-
թիւնս մատակարարէր եւ բաշխէր ամենեցունց ղուարճ սրտիւ ։

Ուրեմն դու յայսպիսի քաղաքավարութենէ, որ ունայն պատահէ .

ցար եւ ամենեւին դատարկ էիր, վասն այսորիկ եղեր ատելի ազդիւր
եւ ի բոլորից աչսց ամենեցուն իբրեւ զիռւշս համարեցեալ. վասնորոյ
անա տյս է ճանաչողութիւն եւ բարեմտութիւն տղզին քոյ. ապա աւ-
րեմն հանդարտեց զսիրտդ եւ լռեցո՛ զեղւ. քոյ. զի նա հանէ որպէս
զլոյս գարդարութիւն եւ առնէ զիրաւունս որպէս զօր հաւարակ. զի
չտրք վաղվաղակի սատակեացին. բայց ոյք համբերին Տեառն, նոքա
ժառանգեցեն: Զի լաւ է սակաւիկ ինչ արդարոյ, քան զբաղում մե-
ծութիւնս մեղաւորաց եւ բազումք ամբարշտաց խորտակեացին:

Յետ ամենայնի դայս եւս պատմեցից, եւ զի թէպէտ կրկնաբա-
նութիւն է, զի յայլ ուրեք եւս լինի թէ պատմեցեալ իցէ. որ ի ՌԻՄԻԲ
(=1773) թուականի Հայոց եւ ի վերջն Նոյեմբեր ամսոյ, յորժամ հրա-
ժարեցաք ի պաշտօնէ մերմէ եւ գնացաք յԻսկիւտար, ձալով մեր
անդ իբրեւ ամիսս տասն, եւ զայն այնու յուսով, զի ըստ խոստմանց
խորհրդական արդարամիտ իշխանաց մերոց, զոր յառաջագոյն խոստա-
ցան մեզ, իբր մնայցեմք (որպէս նախորդն մեր) ի մօտակայ տեղւոյ ի-
միք. բայց տեսաք որ ոչ մնացին ի վերայ խոստմանց եւ խօսից իւր-
եանց, այլ օր ի վերայ աւուր սկսան կուտել ի վերայ մեր զանազան
խուժանս. ապա սկսաք խորհիլ զեւանելոյն մերոյ ի քաղաքէն եւ հե-
ռանալոյն զկերպն եւ զնշանակն թէ որպէս կարասցուք առնել. վասն
որոյ յուսալով ողորմութեան Աստուծոյ եւ խնդրեցաք զի տացէ մեզ
զլուսաւորութիւն մօտաց մերոց զլաւ եւ զօգուտն մեր. ուստի կացաք
եւ մնացաք ի վերայ այս մտածութեանց եւ խորհրդոց. ի յայսմ միջոցի
վասն կիպրոսի կղզոյն զոմն գէտս առաքել հարկաւորեցաւ, ըստ որում
խնդրեալք էին, որովհետեւ ներկայ գէտն իւրեանց վախճանեալ. վասն
որոյ խնդրեցաք եւ առաք զդէտութիւն այնմ տեղւոյն եւ այսու պատ-
ճառու ելեալ ի կոստանդնւպօլսոյ, նաւեցաք եւ ժամանեցաք առ յայն
վիճակ եւ մնացաք անդ իբրեւ ամիսս տասն, պարապելով ի գործս մեր՝
իբր թէ առաջնորդ տեղւոյն յայնմիկ:

Բայց ի յայն միջոցին ուղղեցաք եւ հաստատեցաք զմիտս մեր առ
ի դիմել գէպ առ յարեւմուտս. ուր Տէր առաջնորդեացէ: Ուստի յաջո-
ղութրն Աստուծոյ հանդիպեցեալ եղեւ նաւու իմիք, որ կամէր գալ ի
Վիէթ. վասն որոյ յուսալով մեր ողորմութեան Աստուծոյ, մտեալ ի մէջ
յայնմ նաւուն, ուղղելով զընթացս գէպ առ յայն քաղաք, որ եկեալ
հասաք եւ ժամանեցաք խաղաղութեք ի նաւահանգիստ, թէպէտ սակաւ
յերկար միջոցիւք ի մէջ բազում աւուրեց. զի ըստ որում ձմեռնային էր
ժամանակն, բայց ինչ եւ իցէ ժամանեցաք անգր. ուստի ի ժամանակն մեր
ոչ ապաւս միսթարեցեալ եղաք: Թէ՛ ի մերայնոց, որք անդ եւ կամ
թէ ի յօտարաց ազգաց մարգասիրաց:

Ուստի՛ ձեւելով մեր անդ իբրեւ ամիսս հինգ, ապա զկնի մեծաւ

սիրով դրեալ առ մեզ կոչեցին եւ հրաւիրեցին ի Հոռոմ գալ, վասն որոյ դիմեցաք եւ գնացաք եւ հասաք առ ցանկալին ամենայն, ազանց քրիստոնէից: Ուստի ի ժամանելն մեր անդ բազում ընդունելութիւնս, բազում մխրթարութիւնս, բազում գթութիւնս եւ զբազում ողորմութիւնս տեսաք եւ վայելեցաք. թէ՛ ըստ հոգեկանին եւ թէ՛ ըստ մարմնականին. զի յիրաւի ճշմարիտ վարդապետք եւ աշակերտք զնորին աւետարանական քաղցր վարդապետութեանն. զի ըստ բանի տէրունականի ետուն հացս առ քաղցեալս եւ ջուր առ ծարաւեալս, ժողովելով զտարաքեալս եւ զգեցուցանելով զմերկացեալս, այցելու եւ տածողք լինելով հիւանդացելոյս եւ տեսան(դ)ք բաժնարկեցելոյս, եղին դեղս վերաբերեցելոյս, որ ի հոգի եւ ի մարմն: Ուստի ա՛յ կարեմ հատուցանել զքոխարէնն եւ զտրիտունն, զընկալեալ բարեացն եւ բարերարութեանց, զորարարին եւ առնեն միշտ մինչեւ ցարդ եւ մինչեւ ցլախնանի իմոյ:

Աստանօր ամաչեացեն բարակաման կտաւագործքն ազգին Հայոց եւ ժողովրդեանս մերոյ, զի վայելէր նոցա առաւել ըստ իւրեանց բազկապաշտ քրիստոնէութեանց, որք սենիցէին անկեղծ սէր եւ սիրելութիւն, խնդութիւն, խաղաղութիւն, որ ոչ գոյ երբեք երկայնամտութիւնս եւ այլն: Եւ ոչ թէ խածատել զմիմեանս թշնամութիւն, հակառակութեամբ, երկպառակութեամբ, չարակնութիւն եւ որ ինչ նմանք սոցին. որք այսպիսիքն զարգայութիւն Աստուծոյ ոչ ժառանգեն:

Մընայով մեր անդ ի Հոռոմ քաղաքով իրրեւ ամիսս ինն եւ խնդրեցաք ի վեհագունից, զի առնիցեմք զբնակութիւն մեր առ ծովեղերեայ տեղի ուստի ըստ խնդրոյ մերոյ ետուն մեզ հրաման, զի գնացեմք ի յԱնթուա կոչեցեալ քաղաք. զի ըստ որում է առ ծովեղերը. վասն որոյ դառով մեր ի յայն քաղաք, բնակեցաք անդ վեց տարոյ չափ ժամանակս, որ եւ չի ժամանելն մեր ի անդ էր թուականն փրկչին Ռէմէնէ (=1777) ի յԱպրիլի տասայ. որ ի անգանօր եւս բազում մարդատիրութիւնս գտի եւ տեսի. զի ըստ որում անդ եւս մեացաք, որպէս ասացաք, զամս վեց:

Իսկ զկնի վեցից ամաց կամեցաք եւ խնդրեցաք ի վեհագունիցն, զի առնիցեմք զբնակութիւնս մեր ի վենետիկ, եւ զայս վասնորոյն ա՛յ վասն գիտելոյ մերոյ զլեզու լատինականիս խօսել, ուստի բազում նեղութիւնս կրէաք անդ՝ վասն ոչ գիտելոյ խօսիլ ընդ նոսա. մանաւանդ ի կողմանէ ժամուց եւ ի ժամերգութեանց մնալով մեզ ամենեւին զուրկ զրկեալ. զի ըստ որում Հայոց մի փոքր մատուռ գոլով եւ մէկ քահանայ հայոց եւ ոչ յաւելի. զի թէպէտ եկեղեցիք լատինացւոց բազումք եւ ժամերգութիւնք միշտ հաստատ եւ անխափան, զոր Տէր Աստուած հաստատուածս պահեսցէ: Այլ զի՛նչ օգուտ որ ոչ կարեմ գիտենալն, ուստի վասն յայտ կողմանէ նեղէի յոյժ. վասն որոյ յայտ պատեալացս խընդիրս արարաք, որ եւ հրամանաւ վեհագունիցն եկաք վասն տանելոյ

բնակութիւնս մեր ի քաղաքս՝ այսինքն՝ ի վենետիկ՝ Կորէր
թուական փրկչին 1782. ուստի ի դայն եւ ի ժամանելն մեր աստ քաղաք
մխիթարութիւնս ունեցաք ի մերայնոց եւ ի յայլոց մա՛նաւանդ ի վան-
քեցոց հայոց որո՛ր բնակին ի վանքն սրբոյն Ղազարուս՝ այսինքն ի լու-
սահօդի Արքայի Մխիթարի եւ ի նոյն Մխիթարէն լուսահոգոյն կրօնա-
ւորացն բոլորից եւս առաւել ի ներկայ եղեալ Ստեփաննոս Հայր Արքա-
յէն Գոստանդնուպօլսեցւոյն։ Եւ ի վերայ ամենայնի թրքեւ շառաւթ եւ
աղտուաղարմար զի Ուլանէս աղայէն Անդրոսեան կոչեցելոյն եւ ի քո-
լորիցն ամինեցունց զի ի ծերունեացն հայրութիւնս, յերիտասարդացն
զիւղբարութիւնս եւ ի փոքրագունիցն որդիական սէրս, զգթութիւնս եւ
զմարգասիութիւնս եւ զամենայն բարութիւնս, որ զայս կարեմ ասել ե՛-
համարձակիմ արդեամբ եւ ճ. մարտութբ, զի յիրաւի ո՛չ սակաւ սէր եւ
քնդունելութիւնս տեսի եւ ընդունեցի, մանաւանդ ի ժամանակի եւ ի յա-
ւուր տկարութեան իմոյ։ Որ օն անդր եւ քան զչափն յաւելի պարտա-
կան եմ լինելն մեծապէս շնորհակալս, յորոց տեսեալ եւ զրնկալեալ քա-
րութեանց զփոխարէն եւ զորիտուն ի յայտմ աշխարհի ո՛չ կարեմ հա-
տուցանել զի յիրաւակի ծնողական գութս եւ խնամածութիւնս անձին
ի վերայ մեր եւ տածէին զմեզ միշտ, զոր Տէր կեանս տացէ՛ զմիաբանու-
թիւնս եւ զկրօնս նոցին հաստատունս պահեսցէ ի պարճանտ ազգիս մերոյ։

Եւ սակայն զհին երկուց ամաց ժամանելոյն մերոյ, որ էր թուա-
կանն 1786 ի մէջ Մարտի ամսոյ, դիպեցաւ առ մեզ անբժ(շ)կելի եւ ան-
յեղելի ցաւ իջուածոյ, որ զբաղումս չարչարեաց եւ չարչարէ զմեզ
միշտ։ Բայց ի ձեռն դեղորէից եւ ի ճարտար բժշկաց պատասպարեալ
տածեմք մեք զմեզ, որ զայս օգնականութեամբ եւ նպաստաւորութբ
Սրբոյ Ժողովոյն Փրօֆականտայի կոչեցելոյ, զի ըստ որում հոգաբար-
ձուք էին եկելոց ամենից եկեղեցականաց որք ի յարեւելից՝ վասն որոյ
զթան եւ ողորմին եւ տան մեզ զմերոյս օրըստօրէական թոշակիկն եւ
զհոգեպահիկն թարց վրիպման, որ աշնու կեամք եւ ապրիմք մին-
չեւ ի կէտ կոչման մերոյ, որ Աստուած հաստատաւ պահեսցէ, որք միշտ
զթան եւ ողորմին ի վերայ ողորմեցելոյս։

Աստանօր մեծապէս արժան է աւագելն ի վերայ քրիստոնէական
կրօնի մերոյ, որ զայս տարաձայնութեան որոմն սերմանեցեալ է ի մէջ
իւրեանց, որք հեռացեալք եւ օտարացեալք են ի միմեանց. սրպէս ոմն
ի բաց(°) դաւի եւ ողբայ եւ զարմանայ ասելով. զարմանամ ասէ որ ի
ժամանակն սեղանուջ այլասեռք քրիստոնեայք միաբանեալք ընդ մի-
մեանս բազմին ի սեղան եւ սեղանակիցս լինին, ճաշակին ի միասին ոչ
առնելով զխտբութիւնս եւ այնպէս հրճուին եւ ուրախանան. բայց ի
հոգեւոր աղանջն զի՛արդ բաժանին եւ հեռանան ի միմեանց՝ ճաշակե-

յով զառ եւ ուրոյն , փոխելով զնոյն հրճութիւն իւրեանց ի տըխ-
րութիւնս , զսէրն՝ ի յառեղութիւնս , ուրախութիւնս՝ ի տրտմութիւնս ,
ղցնծութիւնս արտից իւրեանց՝ ի սուգ , զմիտարանութիւնս՝ ի յանմիտա-
նութիւնս , զընտանաւթիւնս իւրեանց՝ ի յօտարութիւնս , պախարակելով
զմիմեանս , խոցողելով զսիրտ եւ զհոգի եւ անշունչելով զկրօնս եւ ըզ-
պաշտօնս եւ ապա թէ սկսին մատուցանել Աստուծոյ զազօթս եւ զփա-
ռաբանութիւնս : Իայց զի՛նչ ասէ բերտնով մարդարէին . ի յաւուրս պա-
հեցողաց ձերոց գտանին կամք ձեր կոտորեալք , զի պանեցողութիւն
ոչ թէ մեք առ կերակուրս եւ առ կոկորդս վերաբերի , այլ ի
յամենայնէ պարտի առնել զպանեցողութիւնս , վասն զի եթէ միայն
որկորն մնղանչեաց պարտ է զի պանիցէ ի կերակրոյ որկոր իւր զ
պանեցողութիւն պարտ է զի յիցի յամենայնէ ուրեմն պանիցէ սիրտն
զի մի՛ չարիս խորհիցէ վասն իւրոյ ընկերին , պանեացէ զլեզու իւր ,
դի մի՛ խօսեացի զգործս որդւոյ մարդկան , պանիցէ բերան , զի ՚ի՛
հայրյալական բանս , զրպարտանաց եւ բամպատանաց արտաբերիցէ ,
պսէիցէ դաշտ , զի մի՛ արատ հայեցութեամբ ցանկանայցէ այլոց բնիկե-
լից եւ ընչից , պանիցէ զականջն , զի մի՛ աղտեղի բանս լուիցէ , պանիցէ
զձեռն իւր , զի մի՛ ումեք հարկանիցէ , պանիցէ զոտ իւր , զի զուցէ զը-
նայցէ եւ ընթացնայցէ ի տունս պոռնկաց , ի զի ետունս եւ այլ ուրեք
տեղիս , որ ո՛չ երբեք վտել է եւ բարձցէ ի սրտէն զխէթս , սխալալու-
թիւնս , զկտիւս , զնախանձն , զնենգութիւնս , զթշնամութիւնս եւ զայլ
սոյնպիսիս , որ ամենեւին ո՛չ ընտրէ եւ ո՛չ հաճի սոյնպիսի պանեցողու-
թեանս եւ զբարեգործութիւնս , զի ասէ Տէրն . զի՛ կոչէք զիս Տէր Տէր եւ
զոր ասեմս ո՛չ առնէք , եւ զի՛նչ է ասութիւնք Տեառն , եթէ ոչ սիրել մա՛-
նաւանդ զթշնամիս եւ բարի առնել ատելեաց , զոր Առաքեալն եւս պա-
տուիրէ զսէրն եւ յորգորէ ի միաբանութիւնս , խնդութիւնս եւ զխաղա-
ղութիւն , եւ զայս այնպիսեացն պատուիրէ , որք հաւատաւն եւ ճանաչեն
զճմարտութիւն . որ է նոյն ինքն ամանատուր երբորդութիւն եւ զմարդե-
ղութիւն Բանին Աստուծոյ եւ զկուսութիւն Մարիամաւ ամենօրհնեալ
միջոյ Կո սին եւ յետ ամենայնի զմի միաբանութիւն բազորի քրիստոնէ-
ութեանն եւ ապա թէ լսելի ինի աղօթք նոցա . զի ըստ բանի Տեառն , ո՛ւր
ժողովեալ են յանուն իմ կամ թէ զոք ինչ խնորհիցեն ի Հօրէ իմմէ յա-
նուն իմ տացի ձեզ . եւ զի թէպէտ խոստացաւ տալ եւ կատարել զլըն-
դիրս մեր , սակայն զի՞նչ ասէ Առաքեալն . խնդրէք՝ այլ ոչ առնուք ,
վասն զի չարաչար խնդրէք , ինչորէք զայն առ ի հատուցանել չար փռ-
խանակ չարի . այլ զինչ ասէ Տէր . մի՛ կալ հակառակ չարի . այլ եթէ
թշնամի է իրեան՝ զնոս . եթէ քաղցեալ եւ ծարուել իցէ տո՛ւր նմա
հաց եւ ջուր , եւ այլն . Զի զայս արարեալ կայծ՝ :

Սրդ եթէ վասն թշնամեաց եւ ատելեաց զայսպիսի հարկադրու-
թիւնս, զոր առնէ, ո՛րչափ եւս առաւել վասն ընտանեաց եւ բարե-
կամաց, մա՛նաւածոք եղբարց եւ հաւատակցաց պարտի տանել զխնամա-
քան թէ առել եւ անարդել զնա, զի այնոքիկ զոր ոչ ունին դուք եւ
խնամ իւրոց ընտանեաց եւ հաւատակցաց, ուրացեալք կոչին ի հաւա-
տոց իւրեանց, Որպէս ասի. եթէ ոչ իւրեանց ընտանեացն խնամս ոչ
տարցէ, ի հաւատոցն ուրացեալ է. հարք եւ եղբարք իւրաքանչիւրոց
ի հարկէ կոչին ընտանիք մանկունք. ուրեմն հակառակն եղբարք եւ
հարք եւս կոչին ընտանիք. Ուստի ասէ Առաքեալն Ովհաննէս, եթէ ի
լոյս իցէ եւ զեղբայր իւր ատլցէ սո՛ւտ է եւ ի խաւարի է տակաւին,
կամ թէ որ սիրէ զեղբայր իւր, ի լոյս բնակի եւ գայթակղութիւն ի
նմա չիք. իսկ որ ասէ զեղբայր իւր ի խաւարի է եւ ընդ խաւարի չըջի
եւ ո՛չ գիտէ յո՛ երթայ, զի խաւարն կուրացոյց զսոյս նորա, զի այս-
պիսիքն են ասէ առաքեալն.



(Բ.)

Տեղի կնքոյն

Օրինակ գրոյն Տեառն թէ ոգորոսի Պատրիարք
Սրբոյն Սաղիմայ:

Ազնուապատիւ, գերբնօիր, բաղմահանճար, մոտրիմ հոգեւոր եւ
սիրելւոյն իմ բաղձալի որդւոյդ Տեառն Գրիգորի վսեմախոհ, ամաքան

վարդապետիք յոյժ յոյժ կարօտիւ եւ կաթողին սիրով ողջոյն ընծա-
յեմ յաւէա լեր ողջ ։

Յետ հարցանելոյ զորկենութենէ սիրելի եւ հարազատ որդւոյ իմոյ
հոգեւորի, զոր Տէր Ած շնորհիւ Սուրբ Տեղեացա եւ բարեխօսութեամբ Սէր-
բոց Յակոբեանց առաքելոցն պահեացէ զքեզ անսայթաք կենօք ամրա-
ծածոսկ ընդ հովանեաւ ամենազօր աջոյն իւրոյ ։ եւ առջ(1) զործոցդ
բարի յաջողումն ասցէ . որպէս զի ուրախութեամբ եւ արգասալիք ճոխութեամբ .
առողջ անձամբ եւ զուարթ մտք զայցես ի Սուրբ Աթոռս ։

Զերկեակ զիր սիրելի եւ պատուական որդիութեանդ իմոյ ընկա-
լածք եւ զհաջոյ զՏեառնէ վասն զործոցդ յաջողութեան եւ քոյդ ան-
ձին առողջութեան . թէպէտ նեղութիւն եւ չարակրօնութիւն հալով՝
յընտանեաց եւ օտարաց . սակայն անթառամ պսակն պատրաստեալ պա-
հի համբերողաց ։

Մարդուանաւ իշխանք կարի շնորհակալ զքէն . եւ ես իբրեւ լուսոյ
յոյժ ուրախացայ հոգեով չափ . եւ Տէր զօրացուցէ զքեզ . եւ պահեացէ
յամ արկածից չարեաց . եւ դու . ոէ՛ր իմ , զործոցդ արի՛ եւ ժիր կացիր .
պնդես զմէջ քո իբրեւ զայր կատարեալ եւ Տէր լիցի քեզ օգնական
եւ խնամիչ ։

Գնալդ ի կօղմն արեւելեան եւ ի Սուրբ դահն՝ յետ մի՛ մնար .
այն աղապաւ թոյլ ետու քեզ աստէն ելանել . ապա թէ ոչ քեզ յինէն
հեռանալն անհնարին էր ։

Գօլտոյ իշխանք կամին զի զկարապետ վարդապետ դայցէ աստ ի
Սուրբ յԱթոռս՝ մեզ աթոռակալ լինել . ապա որ ոչ ուղղեաց զտէրտ իւր
եւայլն . ողջ լեր ի Տէր ։ Գրեցաւ որ ի Սր քաղաքն Երուսաղէմ , ի
Տէր Թէոդորոս մեղապարտ վարդապետէ եւ պատրիարքէ . ՌՄԴ . Ապրիլ
ԻԴ . (=1755. Ապրիլ , 23) ։

(1) առաջիկայ (°) ։

Տեղի կնքոյն

Օրինակ գրոյն նոյնոյ Տն Թէոդորոսի պատ-
րիարքի Սրբոյն Սողիմայ:

Հոգեւոր որդւոյ իմոյ սիրելւոյ յոյժ յոյժ կարտիւ , եւ որնու-
թիւն շնորհիւ Սուրբ Տեւեալս ողջոյն ընծայեմ լեր ողջ:

Յետ ամենայնի եւ զայս ինչ ծանիր սէր իմ զի մեր հայրապետիւ
եղբայրն՝ Յակոբ անարան վարդապետն շնորհակալութիւնս չա՛տ ունի
զքէն . որ եւ հա ուրախ եմ զքէն այսմ կողմանէ . լինի թէ միտ սիրով
ճառեալնդ իւրն եւ ընդ խրայնոցն . եւ դու , սէր իմ , լեր որդի զօ-
րութեան եւ դատի ի վերայ անեա եւ ընդ ամենեւին սիրով կենդա-
ղավարեաց , զի բարբ անուն եւ համբաւ ժառանգեսցես :

Եւ դու անձինդ մի ձեռք հանդերձ եւ վաթսուն դրուլի մատանի մի
վայելեացես յաղագս նուիրակութեանդ Թաթաթու , որ ի ձեռս մեր եւ ի
սբ յաթոս հասցեւոր . օրնեալ լինիս եւ Տէր զօրացուցէ զքեզ :

Եկող փայեկին՝ քաղցր ախմբ հայիս , ողջ լեր :

Տեղի կնքոյն

Օրինակ վկայականի գրոյն . որ ի նոյնոյ Թէ-
ոդորոս պատրիարքէ :

Պատշաճ գրոյս այս է , որ ես Թէոդորոս վարդապետս , պատրիարք
Սրբոյ Աթոռոյս Երուսաղէմի , իմ որդի եւ վեհի յինէն կացուցեալ ի
հոստանդուպոյիս առ ի հոգալ զծախս ըստ պիտոյից Սրբոյ Աթոռոյս
իրապին եւ մաւրաբն . առիցն եւ տրիցն , սկսեալ յայնմ յաւուրն , յո-
բում կացեցաւ ի ՌեօՉ Թուոյն , մինչեւ ցՌՄԷ (==1758) Թուին Սեպ-
տեմբերի ասիս . զոր իրանս եւ մաւրաբն գրեալ ի ճեփճեթի . յետ ամ
իրացն երյաւ . ամբ իրանս եւ մաւրաբն , զորոց երես ընթերցայ յանաջի
ձեռունեաց Սրբոյ ճանս եւ զկնի հաճոյ Թուեոյն ինձ , գրեալ զգիրս
խնայս յղեցի . առ ինքն . որ զկնի առ ապա տեսողացդ հաճոյ Թուեացի
բանք գրոյս , բաւ է :

Դրեցաւ գիրս ի սուրբ քաղաքն Երուսաղէմ , ի ՌՄԸ Թուին , Յու-
նիսի ԻԾ . բաւ է . (==1759, Յունիս 25) :

Տեղի կնիոյ

Օր ի ն ա կ գ ր ո յ ն Տ ն Կ տ ր ա պ ե ա ի վ ա ր ք ա պ ե ա ի ե ա պ ա տ ր ի ա ր ք ի ն Ս ր Բ ա յ ք ա ղ ա ք ի ն Ե ր ու ա ղ է մ ի :

Պատճառ գրոյս է . որ ի ՌՄԶ (=1757) Թուին հայոցս , մեր հայր լուսաւոգի Թէոդորոս պատրիարքն , որ նստաւ պատրիարք Սուրբ յե-րուսաղէմ , զմեր սիրելի եղբայր Տէր Մովսիսի Թոռ. Գրիգոր համեստա-բարոյ եւ հանճարեղ վարդապետն , նստոյց վիճիչ իւր կողմանէ ի մեծն Պօլիս , որ Սուրբ Տանս գործն կառավարէ ըստ հարկաւորութեան . եւ նա յանձն առեալ զծանր լուծս՝ հարազատօրէն ծառայութիւն արար Սրբոյ Աթոռոյս եւ Հօր մերոյս . եւ ի Թոռ. ին ի ՌՄԺԱ (=1762) ին վերա-յեջեալ հայրն մեր վճարեալ զկեանս իւր եւ աւելաւ առ հարս . տէր լուսաւորեացէ զհոգի նորին :

Տնօրինութիւն Այ եւ կտակագրութեամբ Արքազան Հօրն իմոյ եւ կամեցողութիւն բարեպաշտօն օրհնեալ մեծյարգոյամբիրայիցն եւ Սուրբ Ուխտիս բոլոր միաբանից այնպէս եղեւ որ ես , մեղաւոր եւ տեսրժան կարապետ արդայս եւ աշակերտ վերոյիշեալ Հօրն մերոյ , նստայ իբր պատրիարք Սրբոյ Գահիս եւ ես վերստին կարգեցի զմեր սիրելի եղ-բայր Գրիգոր վարդապետն վիճիչ մերս կողմանէ ի մեծն Պօլիս . բայց հարկեցաք , որ նախ քան զիս ո՛րքան իրաս եւ մատարափ անցեր է ձե-ռօքն զհիւսապն տայ , որ ես այսուհետեւ իմ առ եւ տուին իմանամ . եւ նահազանդեալ՝ հարազատ եղբայր գոլով՝ անյապաղ զամենայն առից եւ արից ճեփսերն յղեց առ իս . եւ ես առաջի ծերունեաց Սրբոյ Գահիս տեսի որ ամ իրասն . որ Գրիգոր վարդապետի ձեռօքն հասեր է Թէ՛ ի Սբ Տնէս , Թէ՛ ի նուիրակաց Սրբոյ Գահիս , Թէ՛ ի զանձանակաց . Թէ՛ կտակաց , Թէ՛ ձանդիւղից , զամ զրեալ եւ ընդդէմ նորին ո՛րքան մատարափ արեր է վասն Սրբոյ Տանս , Թէ՛ պիտանիքն որ առեր է , Թէ՛ այդր վասն առնս տալի խարճեր է , Թէ իւր ձեռաց եւ մոռապախի խաւճն . ամ տեսակ , զամենայն զրեալ էր . եւ մեք տեսաք որ միմեանց պատասխանեցին իրանն ու մատարափն վերոգրեալ Թուէն մինչեւ ի ՌՄԺԱ (=1762) . Անպաե Իբերի մէկն . վասնորոյ զայս խելասի գիրս գրեալ եւ կնքեալ ետու ի ձեռս սիրելի եղբոր իմոյ Գրիգոր խոհեմ վարդապետի իբր վկայ . որ զկնի ժա-մանակաց տեսողաց հաճոյ լիցի եւ ի սմանէ ինչ ոչ պահանջիցն . այսուհետեւ ո՛չ սբ Տանս ըստակ մնաց ի վերայ Սբ Տանս . կամ հանգուցեալ լուս-աւոգի Հօրն մերոյ Թէոդորոս Պատրիարքին կամ ի վերայ մեր . այս խելասի գիրս ես Սբ յերուսաղէմայ անտրժան պատրիարք՝ Կարապետ արեղայս՝ գրեցի իմովս ձեռամբս , զիտուիթ արքոյ գահիս վիճիչ եւ

ձերուհեաց նազրաց տեսողաց հաճոյ լիցի. վասն որոյ աստ կնքեցի.

Գրեցաւ խնայսի եւ վկայականի գիրս, ՌՔՃԺԱ. Դեկտեմբերի ԺԴ ի Սուրբ յնչաւ աղէմ. բաւ է (==1762 Դեկտ. 14):

Տեղի կնքոյ

Օր ի ն ա կ վ կ ա յ ա կ ա ն ի գ ր ո յ ն ն ա յ ն ո յ կ ա ր ա -
պ ե տ պ ա տ ր ի ա ր ք ի ս ր Ս ր ու ա ա ղ է մ ի .

Յսի Բսի ծառայ եւ որ Նրուսաղիմայ անարժան պատրիարքի ի Տէր
կաբապետ վարդապետէ, յորմէ եւ շնորհիւ Սրբոյ Տեղեաց յայտ լիցի
Մեծի Մայրաքաղաքիդ Կոստանդնուպօլսոյ բոլոր քահանայիցդ, իշխա-
նացդ եւ հասարակ ժողովրդոցդ եւ Սրբոյ Տանս գործակալաց եւ բոլոր
միաբանիցդ. զի որովհետեւ տնօրինութեան Այ նստաք ի սուրբ գահս
տեւեածաւ՝ մեր եղբայր Գրիգոր վարդապետն, որ մեր լուսաւոյցի Թէո-
գորոս պատրիարքէն վիճիլ եղեալ էր ի Մեծն Պօլիս, յորժամ մեք եկաւ,
նորա ժամանակի հիսապն տեսաք եւ ինչպսի գիր եւս տուի. եւ մեք
վերստին կարգեցաք զսիրելի եղբայր մեր Գրիգոր գիտնական վարդա-
պետն վիճիլ մեքս կողմանէ. այժմ որովհետեւ տնօրինութեամբն Աս-
տուծոյ եղեւ պատրիարք Մեծին Պօլսոյ, Ած իւրն կարողութիւն տայ
եւ բարեաւ վայելէ գիրս աթոռն. քանիցս բողոքեաց աս յիս Թէ չեմ
կարեր երկու գործն ի միասին. եւ իւր հիսապն գրեալ մինչեւ ի յօրս,
այսինքն՝ մինչ ի ՌՄԺԴ (==1765) Թիւն. զոր ինչ իրաց, որ ի ձեռն
իւր եկեալ էր եւ գոր ինչ մաստաֆ արարեալ էր վասն Սրբոյ Տանս.
Թէ՛ իւր պիտանիք, թէ՛ Նոր Տան (==Նրուսաղէմտան) չիտութեան
կողմանէ. զոր ինչ մտաւալ է, Թէ՛ Իւսկիւտարու խառն, ամենայն պա-
րազայիւք հիսապն ետ. առնելիքն էաւ եւ տալիքն ետ. այսուհետեւ ո՛չ
Գրիգոր պատրիարք վարդապետեմ, որ էր վիճիլ Սուրբ Նրուսաղէմայ,
առնելիք մնաց ի վերայ մեր եւ Սրբոյ Աթոռոյս եւ ո՛չ մեզի առնե-
լիք մնաց ի վերայ նորա. վասնորոյ այս վկայական գիրս, ի ՌՄԺԴ,
Ապրիլի ԺԺ գրեցի եւ կնքեցի եւ յղեցի եղբոր մերոյ, որ տեսողացդ
հաճոյ լիցի. (==1765 Ապրիլ 19):

Օր ի ն ա կ գ ր ո յ Ս ր Ա ծ ա ծ ն ի ե կ ե ղ ե ց ա յ ն մ ի ւ ր ք ի վ ի յ ի
մ է ի մ ի ն ա ս ի ն .

Զօրութիւն գրոյս այս է, որ եւ Սր Ածածնի եկեղեցւոյս միւրքիվե-
լի մի Մինասս, հանգուցեալ պատրիարք՝ Յակոբ անաթան վարդապե-
տին չորս հազար երկու հարիւր քառասուն եւ էինգ դրչն զինար ձգած
ստակն, որ ի մօտ Գրիգոր պատրիարք վարդապետին էր, պէտ քեմսմ
տաի զնոյն ԴՌՖՊԵ զրչն. եւ ետու զգիրս իմով. կնքով. զի յապագայ
տեսողացդ հաճոյ թուեսցի. բաւ է.

Տեղի կնքոյ

Ս.յս եղև ի ՌՄԺԴ Թո: ին, Սեպտեբի ԽԱ. (==1764, Սեպտմ. 21):

Օրինակ գրոյն Մշու Սբ Կարապետու Առաջնաբեկ
Օրվաննէս վարդապետի ձեռագրին .

Զօրութիւն գրոյս այս է, որ Կոստանդնուպօլսոյ բոլոր զխաւոր
լիւսանք կամեցեալ եւ հարկադիր եղեալ հոգեւոր եղբօր մերոյ Գայրա-
պետին Գրիգոր պատրիարք փարդապետին . զի ի մէջ Պօլսոյն վասն Մշու
Սրբոյ Կարապետին վանքին՝ մերոյ կողմանէն հաւաքեցեալ գանձանա-
կաց զարդիւնն ինքն հաւաքիցէ եւ առ ինքն պահեսցէ ժամանակ
ինչ . ուստի Բ. տարւոյ գանձակոն միայն ինքն էր հաւաքեալ , որ էր
ՌՄԺԵ եւ ՌՄԺԶ թուականին (==1766 եւ 1767) եւ զայնոսիկ Բ. տար-
ւոյ զհաւաքեցեալ տեճերի մուծիւսովն . այսինքն՝ ինձ Մշու Սբ
Կարապետի վանից առաջնորդ կողմեցեալ Յովհան մեղապարտ վարդա-
պետիս քանակեմ քննյիւն արար . վերոգրեալ որոգան հայրապետին
վարդապետն եւ պատրիարքն մեծի քաղաքիս, որ այսուհետեւ իւր գիւ-
մերն Մշու Սբ Կարապետի վանքի համար հաւաքեցեալ գանձանակաց
արդեանց մէկ փող եւ կամ մէկ ստակ չմնաց , այլ զբոլորն ի այսինքն՝
երկու տարուոյ գանձանակի զդրամն ինձ քննյիւն արար , որպէս ի վեր
անդր յիշեցաք . Ուստի եւ իմ գրեալ զգիրս խնդրիս ետեւ առ ի
հաստատութիւն բանիս . զի ի տիպօղ ժամու տեսողաց հաճոյ լիցի Այս
եղեւ ի ՌՄԺԵ (==1768) թուոյս մերոյ , Նս Մշու Սբ Կարապետու առաջ-
նորդս իմովս ձեռամբս գրեցի եւ կնքեցի : Կնքիս տեղն է .

Տեղի կնքոյ

Օրինակ կոնդակին Տն Սիմէօնի Կաթողիկոսի,
վասն հաշտութեան, եւ վասն թագ դնելոյ հրաման :

Յաի Քաի ար Սիմէօն կաթողիկոս եւ ծայրագոյն պատրիարք աւմ
հայոց առաքելականի եկեղեցւոյն Գի . նաեւ առաքելականի մեծի ա-
թոռոյս Սրբոյ Էջմիածնի . յորմէ ժամանեցի զիւր սիրոյ մեւ օրհնու-
թեան, ողջունի եւ խաղաղութեան ի վերայ սիրելեացդ մեքոց հարա-
զատ եւ սիրտցաւ որդւոցդ Սրբոյ Աթոռոյս ի մեծդ Պլիւս զեանդեցե-
լոցդ ճշմարտայոյզ վարդապետացդ, ածանաճոյ քահանայիցդ, բարեպաշ-
տօն իշխանացդ, բարեմիտ ժողովրդոցդ , բնակից արեւելականացդ եւ
արեւմտականացդ, բնակացդ եւ եկացդ , մեծացդ եւ փոքունցդ, արանցդ
եւ կանանցդ, ծերոցդ եւ աղայոցդ, եւ առհասարակ ամենեկեղեցւոցդ որոց
լիցի խնդալ ի ձէր . ամէն : Շնորհք ընդ ձեզ եւ Երկնաւոր խաղաղու-
թիւն յԱյ հօրմէ ամենակալէ եւ ի Տեսառնէ մերմէ Յսէ Քաի եւ ի Սրբոյ
Հոգւոյն կենարարէ իջցէ եւ հանգիցէ . եկեացէ եւ բնակեացի առ ձեզ , և .
րնդ ձերայինսն ամ , եւ լցուցէ զձեզ ամ քարութեւ Կողեւոր եւ մար-
տաւոր , ամէն :

Յւ. ընդ սիրաքարոզի, խաղաբարբի եւ խռովաբարձի գրոյս ծա-
նուցողն լիցի եղբայրասէր սիրելեացդ հայրասէր որդեկացդ եւ աթո-
ռաւոր ազգիդ մերոյ օրհնեցելոյ. քանզի ըստ վարդապետաց եկեղեցւոյ
միշտ խաղաղութիւն է ի հրեշտակս միշտ խռովութիւն ի դեւս. որով-
հետեւ երկու տեսակքն եւ մշտաբար նոյնպէս գոլոյ եւ տեղւոյ են վի-
ճակեցեալք, իսկ երբեմնականն է ի մարդս. որովհետեւ փոփոխաւորս գոլոյ
եւ տեղւոյ վիճակեցաւ ի կենւոջս : Սակայն որք պահեն զկանօն
բանախնութեան ամանման գոլոյ եւ ունին զճշմարիտ հաւատն զայն
թէ մեր կենցաղավարութիւն յերկինս է ուստի եւ Փրկչին մերոյ ակն
ունիմք, եւ ոչ ունիմք քաղաք աստէն մնալոյ, ջանան որքան հնար է
խոյս տալ ի խռովաութիւն բերմանց եւ հետեւիլ խաղաղաութիւն : զի ըստ
հարց իւրեանց ընդ հրեշտակսն դասեցին եւ զերանութիւն ժառան-
գեացն ուսեալք ի Բրիտտոսէ : իսկ ներհակակոյս ջանացողքն (որք թող-
եալք են զբանախնութեան կրօն եւ զհաւատս զայս) զխռովութեան
ջանան բռնա արկանեն, որքան կարեն, զի ընդ դեւսն դասեցին եւ զայն
ժառանգեացն. քանզի ըստ վճռոյն Գի, որպէս հարկ է գալ դայթուկ-
ղութեան : բայց վա՛յ այնմ որ ձեռն արիցէ (') : Նժանապէս եւ ննազանդ
լինել խաղաղութեան. բայց երանի այնմ, ոյր ձեռն լինիցի. որ եւ ճշ-
մարիտ նախահաւատային ամ, այսմ ճշմարտի հաւատոյս վիճակեաց
զձեղ եւ զմեզ : Արդ կամիմ ասել սիրելեացդ իմոց թէ երկար միջոց ե-
ղեւ յորս ի քաղաքդ յօրհնեալ ժողովուրդս մեր տարաձայնութիւնք,
խռովութիւնք, ամանք եւ ոմանք Պօղոսեան եւ Ապօղոսեան ներմուծան.
թէ վասն է՞ր եւ յորո՞ց պատճառէ. թէ յորո՞ց են յանցանքն եւ ո՞վ ունի
զիրաւունս անպատեհ է դիտողացդ վերկրկնել. եւ չունիմ իսկ ժամանակ
երկարել. եւ մա՛նաւանդ տալով Այ որ դատաւոր է արդար եւ անէ
զիրաւունս զրկելոց. վասն որոյ ըստ վերոասացեալ ճշմարտի հաւատոյն
անխախտ յուսոյն մերոյ. ահա այսու օրհնութեան եւ խաղաղաբարբի
գրովս բառնամք ի ձէնջ զայն ամ խռովութիւնսն եւ զհոգեմտաս եւ ըզ-
մարմնատոյժ տարաձայնութիւնսն եւ անհետ առնեմ իսպառ : Որով եւ
հարկիւ պատուիրեմ ձեզ սիրելեացդ իմոց վարդապետաց, քահանայիցդ,
իշխանացդ եւ հասարակ ժողովրդացդ ամենեցունց, արեւելակառնաց եւ
արեւմտակառնացդ : զի իսպառ. բարձրիք եւ անհետ արաւջիք զայնո ամ.
եւ համարեալիք որպէս չեղեալ ամենեւին. եւ որք վասն այսորիկ ու-
նիք զխռովութիւն, զխաթրամնացութիւնս, եւ զայլամտութիւնս ի
ձեզ, պարտիք զայնս ամենայն բառնալ ի ձէնջ եւ ի մտաց ձերոց, եւ
ողջագարական սրբով համբուրել զմիմեանս եւ հաշտիլ եւ լինել միա-
միտ եւ միասիրտ եւ համակամ եղբարք : զորս ես այսու գրովս ահա
ողջունեմ եւ օրհնեմ եւ ի սէր որդիութեան ընդունիմ յիմա կողմանէ
եւ ճշմարիտ հաշտելով՝ մոռանամ զտնցիցն այննայն : Նոյնպէս եւ ճշ-

մարիտ սիրով եւ աննհնգ մտօք ահա ողջունեմ եւ օրհնեմ զսիրելի եղբայր իմ, զվաղեմի բարեկամն, զհարազատ եւ զբարեմիտ որդին Սրբոյ Աթոռոյս զպատրիարք համեստակեաց վարդապետն, որոյ զճակատն համբուրելով շնորհաւորեմ զարժանաւոր պատրիարքութիւն զօրին, զոր եւ յանձնեմ հանդերձ ձեօք ի խնամս եւ ի հովանաւորութիւնս Այ եւ զձեզ ամենեցունցդ պատուիրեմ հարկիւ, զի թէ՛ արեւելահայեացք եւ թէ՛ արեւմտահայեացք ըստ իմոյ համբուրի եւ շնորհաւորութեանս եւ դուք ամենեքեանքդ ներքնապէս ճշմարիտ սիրով եւ խոնարհութիւն համբուրեալիք զօր աջն զօրին եւ շնորհաւորելով զպատրիարքութիւն տառաջիք. «Կեցցե՛ հայրդ մեր եւ հովիւն», եւ որք ունին խէթ եւ զբիծ ինչ ի դմանէ ի ձեզ թէ՛ իրաւ եւ թէ՛ անիրաւ, բարձեալ խաղառ տնհետ աբաղիք եւ լիջիք հլու եւ հնազանդ յամի ի հոգեւոր եւ յածաւանդոյ եւ հասարակօգուտ հրամանաց դորին, զի եւ ինքն խնդութիւն հովուեացե՛ զձեզ եւ մի՛ յողուց հանելով, որով եւ լինիջիք մի հօտ եւ մի հովիւ ըստ կամաց ճշմարտի հովուապետին Քի եւ ընկալիք զօրհնութիւնս ի նմանէ եւ ի մէնջ փոխանորդէս նորին՝ կատարելով զհրամանս մեր: Քանզի մեր եղբայր է եւ սիրելի այսուհետեւ եւ Սրբոյ Աթոռոյս հարազատ որդի եւ ձեզ հոգեւոր հովիւ եւ տեսուչ հոգւոց ձերոց: յորում եւ տուաք հրաման թագ գնել ի գլուխն: զթագ գնել ի ժամ արքայնադործութեան պատարագի ի պատիւ երեսաց իւրոց եւ ի նշան իսկահանի սիրոյն մերոյ: զոր բաց ի պատրիարք վարդապետէ յեղբօրէ մերմէ ալլք վարդապետք, որք չեն եպիսկոպոսք, շուռին հրաման գնելոյ եւ ի կիր արկանելոյ:

Նրկբորդ պատուիրեմ հարկիւ եւ օպառնալեօք խառվարկ կռուաւորս եւ չարանիւթ անձանց ոմանց, որք ոչ են եւ ոչինչ կարեն խօսել իւ կամ տանել, ալ են շրջողք տանէ ի տուն, դատարկ, փասքուսք, հետքըքրքրք եւ վայրապար խօսողք եւ հոռեցուցանողք հառարակութեան: Որք եւ նմանք ա՛յնմ գարշելոյ ձկան ինքեանք եւ ի յատակս ծովու գազին եւ հետօքն (միտօքն) իւրեանց զեկեղեցին եւ զհառարակութիւնս ապականեն: որ հաշնելով եւ արկանելով զհոռեցուցիչ լեւ զապականիչ քաղցիրայս յեկեղեցիս եւ տան զգայթակղութիւնս բազմաց եւ կուտեն զկարծիտ ի վերայ անմեղաց, չմտածելով տխմարացն թէ որ լոկ եւ ցընդական բռնիւ բամբասեն, դատապարտելիք են, որքան ճշտ օրք ի գիրս արձանացանեն եւ զբազում անպարտս ի բերան արկանեն, որոց տհա՛րեմ զի զղջասցին եւ ի բաց կացցեն այսուհետեւ. եւ թէ ո՛չ ընդ բռնիւ են եւ անիծեալք Այ եւ ի մէնջ ի հոգի եւ ի մարմին, մինչեւ զճշլասցին եւ ի հրապարակի խոստովանեսցին:

Եւ վերջապէս պատուիրեմ ամենեցունցդ սիրովն Քի, արեւելահայեացք եւ արեւմտահայեացք, զի որքան խօսք, զրոյցք եւ բանակալեք ան.

ցին ի միջի ձերուս, վասն այսր երկուութեանս^(*) զամենայն մոռասցիք եւ հանջիք ի մտաց ձերոց եւ մի՛ եւս վերակրկնելով արծարծեսցիք ի միտս եւ ի բանս եւ կամ զհարադատ եւ զհաւատարիմ որդիս Սրբոյ Ա. Թոռոյս, զպատրիարք վարդապետ եղբայրն եւ զբարեմիտ իշխանքն մեր իբր ընդդիմացող կարծելով հրամանաց մերոց ի մեղադրանս ունիցիք ի միտս ձեր. քան զի որպէս զուք պարզ հաւատով եւ միամտութիւն զօգուտն Սրբոյ Ա. Թոռոյս կամիք եւ զպատիւն մեր պանել ջանայք. զդոյն ցիտաւորութիւն ունին եւ նոքա եւ կամին ի վախճանն նկատելով եւ մա՛նաւանդ յայդր եթէ ի Սրբոյ Ա. Թոռոյս մարդ իցէ եւ թէ՛ ոչ, ցաւակիրք, հոգաբարձուք եւ զործաւարք մեր են Սրբոյ Ա. Թոռոյս, պատրիարք վարդապետս եւ օրհնեալ իշխանքն են որպէս զիտէք, ամենեքեանք, ուրեմն ո՛չ պարտիք այսուհետեւ ներհակիլ նոցին կամօցն եւ գիտաւորութեանց, որք վախճանապէս ի յօգուտ Սրբոյ Ա. Թոռոյս եւ ի պատիւ հայրապետականի անուանս մերոյ նկատելով խորհին, կամին եւ առնեն. որք եւ ամենեքեանք կատարողք հրամանաց մերոց եւ զիջիք օրհնեալք ի յԱյ եւ յածածջ Սրբոյ տեղւոյս եւ. ի մէնջ. ամեն:

Գրեցաւ ի ՌՄԺԴ. Թուին ի Սեպտեմբերի Ժ. ին առ դասն լուսաւ կառոյց եւ տրբանկար ակթոռոյս Սրբոյ էջմիածնի. (==1765. Սեպտ. 10):

Վերջ:

Տեպի կնիոյ

Օրինակ գրոյն նոյնոյ Սիմէօն Կաթողիկոսի:

Յսի Բսի ծառայ Տէր Սիմէօն Կաթողիկոս ամենայն Հայոց եւ ծայրագոյն պատրիարք առաքելականի եկեղեցւոյն Բի եւ տիեզերական մեծի ակթոռոյս Սրբոյ էջմիածնի. յորմէ ճշմարիտ եւ անոյգ սիրով, մեծաւ կարօտիւ եւ քրիստոսական ողջունիւ գիտասջիր սիրելի եղբայրդ իմ եւ ցանկալի հոգւոյս եւ արժանաժառանգ պատրիարք մեծի օրհնեցելոյդ Պօլսոյ Գրիգոր Խոհեմափառլ եւ գերիմաստ վարդապետ, զի ի ներկայումս զրամ պիտոյացաւ սրբոյ ծնողին քոյ մեծի Ա. Թոռոյս. վասն որոյ եւ մեք առաք ի Կարին յԱրապկերցի եւ այլն ի վերայ Ա. Թոռոյն վերաբերեալս:

Գրեցաւ ի ՌՄԺԷ. Թուին ի Յունուարի իին եւ ի լուսանկար Ա. Թոռոյ Սրբ. էջմիածնի. (==1768 Յունվ. 20):

Օրինակ մահսեր տկանի գրոյն, որ վասն ընտ-
րութեան նմի պատրիարքութեան:

Յանուէն Հօբ եւ Որդւոյ եւ Հոգոյն Սրբոյ. Ամէն:

Մեք ի Կոստանդնուպօլիս բնակեալ համայն եպիսկոպոսունքս,
վարդապետքս, քահանայքս, իշխանքս եւ իշխեցեալքս եւ բոլոր լուսա-
ւորչածին ժողովուրդքս եւ անքի նեմայիք կոչեցեալքս ծանուցա-
նեմք ձեզ ամենեցունցդ, որք բնակեալ էք ի Սր յնրուսաղէմ ի Վանքն
Սրբոյն Յակոբայ, համայն եպիսկոպոսաց, վարդապետաց, նազրներաց,
եւ քան հասարակ միաբանից սուրբ Երուսաղէմի, զի լսելով զվախճան եւ
բանելի հօրն մերոյ սուրբ Երուսաղէմայ պատրիարք Թէոդորոս հոգիաց-
եալ վարդապետին, որ ի Թուրքն Հայոց ՈւՄԺ (1761)ին եւ ի տեպեմ-
բերի Նին, ժողովեալ ի Մայր եկեղեցիս Սրբայ Կուսի Մարիամու Ածա-
ծնին, համահաւանութեամբ Տեստն Յակոբայ Ածաբան վարդապե-
տին, Սրբազանի հօրն մերոյ եւ Կամակցութբ ամենեցունցս, ի տեղի նորին
Սուրբ Երուսաղէմայ Պատրիարք ընտրեցաք զսուրբ Գէորգայ եկեղեց-
ւոյ Թագերեց Տէր Մովսէս քահանայի Թոռն, զՏէր Գրիգոր Ժողովար
եւ բարեհամբաւ վարդապետն, որ քանի մի ամառ աստ առ մեզ գո-
լով դիտեմք եւ վկայեմք զխոհմութենէն եւ զհանճարեղութենէն սո-
րինս եւ մտնաւանդ, զի դուք գրեալ էիք ի մահերեական գիրն ձեր թէ՛,
եթէ զմեր կամեցեալն չկամենայք մինչեւ ցյետին արեղայն սրբոյ տ-
Թոռոյս մեզ հաճոյ է եւ ընդունելի. միայն թէ յօտարաց ոք մի՛ լիցի:
Արդ դստ կամիմք, զի իցէ յաջորդ եւ փոխանորդ գահին Սրբոցն Յակոբ-
եանց երջանիկ առաքելոցն, որ ի յԱթոռ Սրբոյ Երուսաղէմի. Ուստի ու-
րովնեալս ելլեն հոգոսս այս եղև կամօքն Այ եւ գործակցութբ Հոգւոյն
Սյ, զկնի այսորիկ ո՛վ ք չանաւան լիցի ընտրութեան եւ կամաց
մերոց,՝ աշխարսին արտաքս անկեալ է ի սրբոյ ժողովոյս. վասն որոյ
եւ կամաւ մերով կնքեցաք զգիրս. ոպջ լերուք:

Կնքողք եւ ստորագրողք աշն մահերեական գրոյս, թէ քահա-
նայք եւ կամ թէ իշխանք եւ ժողովուրդք ընդ ամենն՝ անձինք հօթա-
նաւուն եւ մէկ:

Եւ զի թէպէտ ընտրութիւնս այս, որ եղև վասն մեր սակայն մեք
ո՛չ հաճեցաք եւ ո՛չ ի յանձին մերում առաք. այլ՝ հրաժարելով հրա-
ժարեցաք եւ թօթափելով զօձիս մեր իսկայն ելաք ի միջոյ յայնմ ժո-
ղովոյն, որպէս յայտ է ի ներկայ գտանեցելոց, որ ի մէջ ժողովոյն յայն-
միկ, որոյ զպատճառն գրեալ կայ ի տեղի իւրում. զոր կարես գիտել
եւ բարեւոքապէս իմանալ: